25. ՈՒՍՏԱ ՄՈՒՐԱԴԻ ՀԵՔԻԱԹԸ

Քանանու երկրում[1] կենում էր մի թաքավոր Աղիզ էֆենդի անունով։ Էս թաքավորը իրեք տղա ուներ։ Ամենից պստկի անունը Մուրադ էր ու ամենից ղոչաղը նա էր։ Մի անդամ թաքավորը իրա իրեք տղերքանցը ղրկեց մոտիկ գեղերը՝ բանի։ Ճամփին սրանց վրա դողեր թափեցին։ Վախլուքյունից էրկու ադբրտինքը փախան, մնաց Մուրադը՝ պուճուր աղբերը։ Մուրադը էդ գողերի հետ կռիվ արեց ու հաղթեց, մի քանիսին սպանեց, մի քանիսին էլ ձիու ոտը կապեց ու բերեց իրա վախլուկ աղբրտոնց մոտ։

— Ամո՞թ չի ձեզ,— ասեց Մուրադը,— բալքի ինձ գողերը սպանում էին, ինչու ինձ մենակ թողիք, փախաք. աղբերությունը էդպես ա, հա՞։— Մուրադի աղբրտինքը կարմրեցան ու վախեցան, չլնի թե էթա Մուրադը թաքավորին ասի. մտածեցին, որ մի դհով նրան կորցնեն, որ չէթա ասի իրանց հորը։

Նրանք Մուրադին ասեցին.— Ըսաեղ մի իոր հոր կա, մեջը լիքը ոսկի, էրծաթ. էթանք կախ ըլնենք, հանենք։

---

1 Քանանու երկիրը Քանանացոց երկիրն է, ու ավանդություն կա այս երկրի մասին, իբրև թե այս երկրի գայլերը միս չեն ուտում, այլ ցորեն, որովհետև Հակորը անիծել է նրանց ու ասել, որ «Դուք եք կերել իմ Հովսեփ որդուն։ Սրանից դենը դուք ցորեն կուտեք» (Ծ. Բ.)։

Մուրադը, որ սրտոտ ու ղոչաղ տղա էր, ասեց.— Որդի՛ ա էթանք ես կախ կըլնեմ, կհանեմ։— Աղբերտինքը նրան տարան մի խոր հոր շանց տվին։ Պարանով Մուրադին կախ արին հորը ու դեռ հլա չէր հասել, Բոկը կտրեցին, ու Մուրադը ընկավ ջրով լիքը հորը։ Համա նրա բախտից ջուրը էնքան խոր չէր, որ նա խեղդվեր։

Մի բեզրգյան էկավ իրա համար ջուր հանելու էս հորից ու փարխաշը կախ արեց Բե չէ, Մուրադը նստեց նրա մեջ. բեզրդյանը ճկրելով անջախ կարաց նրան դուս քաշի։ Բեզրգյանը առաջին անգամ որ տեհավ Մուրադին, վախեց։ Համա Մուրադը նրան սիրտ տալով ասեց.

— Մի վախենա, ես հողածին եմ, իմ աղբերտինքը վատություն արին, ինձ գցեցին էս հորը, որ մեռնեմ, համա աստված ինձ խղճաց ու քու ձեռքով պրծացրեց ինձ։ Մուրադը շնորհակալ էլավ իրան աղատող բեզրգյանից ու իրա ճամփով գնաց։

Մուրադը տենալով, որ էլ իրա աղբորտանց մոտ էթալը իղուր ա, չունքի նրանք ամեն վախտ ուդում են զիան տա, ասեց որ. «Լավ կըլնի, որ գլուխս վե կալնեմ մի դհով էթամ, իմ աղբորտանց էրեսը չտեսնամ»։ Մուրադը գնաց ու մի թաքավորի մոտ ձիապան էլավ։ Մուրադի աղբրտինքը իմացան, որ Մուրադը իրանց քցած հորից դուս ա էկել ու ուրիշ թաքավորի մոտ ձիապան ա, միտք արեցին, որ նրան էնտեղ էլ մի զիան տան, չունքի իրանց արած բանը կարար իրանց հոր ականջը ընկնի։

Նրանք մի պառավ կնիկ գտան, որը խոսք տվեց, որ կէթա նրան մի բանով կկորցնի։ Նրանք էլ էն պառավ կնկանը փող տվին։ Պառավը գնաց էն թաքավորի մոտ ու ասեց.

— Թաքավորն ապրած կենա, քեզ ամեն բան թամամ ա, մնում ա, որ ֆլան թաքավորի աղջկա մոտից բերել տաս նրա Բյուլբյուլը, որ էնթավուր խոսում ա՝ մարդի խելք տ էթում։

Թաքավորը ասեց.— Ախար լավ ես ասում, ո՞վ կարա նրա մոտից փախցնի Բյուլբյուլը, հեշտ բան չի։

Պառավը ասեց.— Էն քու ձիապան Մուրադը կարա բերի, էլ ոչով, նրան ղրկի։

Մուրադին թաքավորը կանչեց ու ասեց, որ՝ ոնց որ ըլնի, պտի էթաս բերես ֆլան թաքավորի աղջկա Բյուլբյուլը, թե չէ գլուխդ կկտրեմ։ Խեղճ Մուրադը ինչ կարար ասի, թաքավորի հրամանն տ,

պտի իրա գլուխը մահին տար ու ոնց որ ըլներ պտի թաքավորի աղջկա Բյուլբյուլը թոցներ ու բերեր։

Ղոչաղ Մուրադը վե կացավ ու «ցա՜ տեր աստված» կանչելով ճամփա ընկավ։ Ճամփին ռաստ էկավ մի դև, որ նստել կրակ էր արել ու տավարների դլխները շամփրի վրա շարել, խորովում էր։

Մուրադը դևին բարով տվեց ու կրակի մոտ նստեց։

— Բարո՛վ, աստծու բարին,— պատասխանեց դևը,— դու ո՞նց սիրտ արիր ու էկար ըստեղ. օձն իրա պորտով, ղուշն իրա թևով չի կարայել գա ըստեղ, դու ո՞նց էկար։ Լա՛վ, արի խորոված ուտենք, հետո կովենք։

Դևն ու Մուրադը նստեցին հաց կերան, պրծան, վե կացան կովելու։

Մուրադը իրա դյուրդը քցեց՝ դևը բռնեց, դևը քցեց՝ Մուրադը բռնեց։ Սիրար էրկուսն էլ ղոչաղ են, ո՞նց պտի իրար հաղթեն։ Տասը օր էսպես իրար հետ կովեցին ու նրանցից ոչ մինը չկարաց հաղթի մեկելին։

Մուրադը դևին ասեց.— Էսպես կռիվ անելով ոան չի ըլնի. արի կոխ պրծնենք, ով ում դետնովը տա՝ նա նրան մորթի, չունքի մեր ձիաննները անդարի են մնացել, սաղ տաս օր զատ չեն կերել, մեղք են, մենք էլ ենք մեղք։

Մուրադն ու դևը կոխ պրծան. ղոչաղ Մուրադը վե կալավ դևին ու դետնին չխկացրեց. թուրը քաշեց որ մորթի, դևը ասեց.

— Ինձ դևռ հլա մի մորթի. չունքի դու էթում ես, որ թաքավորի աղջկա Բյուլբյուլը փախցնես, ես ասեմ, թե ո՞նց պտի բերես Բլբլին։ Մենք նրա համար ենք, որ մարդի չթողնենք, որ ըստեղով անց կենա։ Սրանից որ մի պուճուր հեռանաս, մի ղոչաղ մարդի կաենաս, որ ծառի տակ նստել ա։ Հաղարավոր մարդիկ են դնացել նրա մոտ, բոլորին էլ նա մորթել ա ու նրանց ջամդակներից բերդ ջինե, նրա մեջ ա ապրում։ Թե որ նրա ձեռից էլ պրծնես, շատ մեծ ոան ա։ Հետո կէթաս թաքավորի աղջկա մոտ։ Նա քնած կըլնի ու նրա կողքերքին չորս մում ա վառվում։ Թաքավորի պալատի առաջ կանդնած են մի ոչխար ու մի դել։ Դելի առաջ խոտ ա դրած, համա ոչխարի առաջ՝ դմակ։ Կէթաս ոչխարի առաջից դմակը վե կկալնես ու կդնես դելի առաջ, իսկ դելի առաջից խոտը կառնես ոչխարի առաջ կդնես։ Հետո պալատը էրկու դուռ ունի, մինը բաց ա, մեկելը՝ շինած. շինած դուռը բաց կանես, բացը՝ կշինես։ Պալատի

դռներից զանգուլակներ են կախ արած, որ Բյուլբյուլը վերցնես, զանգուլակները ձեն կտան ու թաքավորի աղջիկը քնած տեղից վեր կկենա ու հետո նրա ձեռից չես պրծնի, չունքի նա շատ ղոշաղ ու իգիթ աղջիկ ա։ Հետդ բամբակ կտանես ու զանգուլակների մեջ կլցնես, որ ձեն չհանեն։ Հետո կէթաս ու Բլբլի ղաֆազը, աղջկա աջ ղհում կախ ա արած, կը վեկալնես ու մի լավ էլ նրա էրեսը կպաչես՝ էն սհաթը իրեսին խալ դուս կգա, ու դու կփախչես։ Հետևիցդ սար կը ձեն տա՝ «տարա՜ն», քոլ կը ձեն տա՝ «տարա՜ն», քար կը ձեն տա՝ «տարա՜ն», համա դու իսկի եգ մտիկ չտաս ու փախի գնա, որ պրծնես։

Դևը հենց որ իրա խոսքը վերջացրեց, ղոշաղ Մուրադը թուրը քաշեց ու դևի գլուխը կտրեց։ Դևին հաղթելուց հետո նա գնաց գնաց էն ղոշաղ մարդուն ասաց էկավ, որ ծառի տակ նստած էր։ Մուրադը նրան մտիկ տվեց ու ասեց.

— Էկել եմ, որ քեզ հետ կռիվ անեմ ու էթամ թաքավորի աղջկա Բյուլբյուլը բերեմ, փախցնեմ։

Ղոշաղ մարդը ասեց.— Լա՛վ, արի կռիվ անենք, ով ում հաղթի՝ նա նրան մորթի, հրես թուրը ըստեղ ցցած ա։— Մուրադը իրա գյուրզը քցեց՝ նա բռնեց, նա քցեց՝ Մուրադը բռնեց։ Էսպես մի տասը տասնհինգ օր կռիվ արին, համա նրանցից ոչ մինը չկարաց հաղթի մեկելին, չունքի էրկյոով էլ ղոշաղ էին։

Հետո Մուրադը ասեց.— Արի կոխ պրծնենք, ով ում գետնով տա, նա նրան մորթի։— Էդ մարդն էլ լսեց նրա խոսքին ու սկրսեցին իրար հետ կոխ պրծնել։ Իրար դես ու դեն քաշքշեցին ու ղոշաղ Մուրադը վեր կալավ ղոշաղ տղին գետնովը տվեց։ Մուրադը նրա մի ոտը կապեց մի ծառից, մեկելը՝ մյուս, որ մի-մի ձեռով էր էն մենձ ծառերը կռացրել, ու բաց թողեց, ղոշաղ մարդը կես էլավ։

Դևին ու ղոշաղ մարդուն սպանելուց հետո նա գնաց հասավ թաքավորի պալատը։ Դռան առաջ կանգնած ոչխարի առաջից դմակը վեր կալավ ու գրեց գելի առաջը. գելի առաջից էլ խոտը վեր կալավ՝ գրեց ոչխարի առաջը։ Էն դուռը, որ շինած էր՝ բաց արեց. իսկ բաց արածը՝ շինեց։ Գնաց զանգակները բամբակով լցրեց ու ներս մտավ թաքավորի աղջկա օթախը, Բլբլի ղաֆազը, որ կախ էր արած նրա գլխի վերևը, վեր կալավ ու նրա էրեսը պաչեց՝ խալ ընկավ էրեսին։ Մուրադը Բլբլի ղաֆազը փախցրեց. քար ձեն տվեց.

ետևիցը՝ «տարա՜նա», քոլ ձեն տվեց՝ «տարա՜նա», համա նա փախավ գնաց։ Աղջիկը վե կացավ ու էկավ ասեց զանգակներին. «Ինչո՞ւ ձեն չհանեցիք»։ Նրանք ասեցին. «Էսքան տարի ես ձեն էի հանում, ոչ ով ինձ բամբակով չլցրեց, որ քիչ գընչանամ, համա նա բամբակով լցրեց, ինչի՛ ես ձեն հանեմ»։ Դռանը ասեց. «Ինչո՞ւ չկողպվեցիր»։ Նա ասեց. «Էսքան ժամանակ ես կողպված էի, ոչ ով ինձ չրաց արեց, համա նա էկավ ինձ բաց արեց ես ինչո՞ւ նրան բըռնեի»։ Ոչխարին ասեց. «Ինչո՞ւ նրան չբռնեցիր»։ Նա պատասխան տվեց. «Էսքան ժամանակ առաջս գրած էր դմակ, ես մնացել էի սոված, նա էկավ առաջիցս դմակը վե կալավ ու խոտ դրեց, ինչո՞ւ նրան ես բռնեի»։ Դելին ասեց. «Ինչո՞ւ նրան չբռնեցիր»։ Նա ասեց. «Էսքան ժամանակ առաջս խոտ էր դրած ու ես մնացել էի սոված. նա էկավ խոտը առաջիցս վե կալավ ու դմակ դրեց. ես ինչո՞ւ նրան բռնեի, որ ինձ մենձ լավություն արեց»։

Թաքավորի աղջիկը ձին նստեց, ասպարավորվեց ու գնաց տղի ետևից։ Էկավ տեհավ, որ էն ղոչաղ մարդը էրկու կես ա էլե ու վեր ընկել։ Հետո գնաց տեհավ, որ ղեր սպանած ղիմա-ղիմա ա արած։

Մուրագը էն Բյուլբյուլը տարել էր տվել թաքավորին։ Թաքավորի աղջիկը ղնաց հասավ էն թաքավորի երկիրը, որի մոտ էր իրա Բյուլբյուլը, ու մարդ ղրկեց, որ պատրաստ կենա՝ պտի գա կռվի նրա հետ։

Թաքավորը էրկու տղա ուներ. նրանցից մինը, որ ուզում էր իրա ղոչաղությունը շանց տա, ասեց.

— Ես փոխցրի քո Բյուլբյուլը։

Աղջիկը հարցրեց.— Ո՞նց փախցրիր։

Նա ասեց.— Էկա ու ղոռով գլխի վերևդ քաշ արած ղաֆազը փոխցրի։

Աղջիկը տեհավ, որ սուտ ա ասում, մի թաթալոշեց, որ գլուխը հինդ սաժեն հեռու վեր ընկավ։ Հետո նրա մեկել աղբերը էլի սրա նման սուտ պարծեցավ. աղջիկը տեհավ, որ սուտ ա ասում՝ սրան էլ թաթալոշեց ու գլուխը դեն քցեց։

Էս աղջիկը շատ ղոչաղ էր. մի անգամ, երբ սրա մարդը իրա հետ խոսում էր, աղջիկը թևից քաշեց ու մարդի թևը կտրվեց։ Սրանից ետ նա ախտ էր արել, որ ոչ մեկի հետ չպսակվի, մինչև որ իրա նման ղոչաղ մարդ պատահի ու հետո նրա հետ պսակվի։ Հետո աղջիկը տեհավ, որ իրա Բյուլբյուլը չեն տալի, սկսեց կռիվը

Թաքավորի հետ։ Ղոշուն ղոշնի վրա ղրկում էր Թաքավորը, համա մենակ աղջիկը փոթում, կոտորում էր. նրան զադ չէր դիմանում։

Վերջը Թաքավորը Մուրադին ղոշուն ղրկեց։ Նա նրիվ չարեց, ու երբ աղջիկը հարցրեց, թե՝ դու ո՞նց փախցրիր Բլբլին, նա մինմին ասեց։ Թաքավորի աղջիկը տեհավ, որ ղորթ ա ասում, ձիուց վեր էկավ ու նրա ճակատը պաչեց ու ասեց.

— Սրանից ետ ես քունը, դու իմը, ես էլ ղաթի քեղ պես ղոչաղ մարդ էի ուզում ու քթա։

Էս պառավը տեհավ, որ չիլնում, ուրիշ բան մտածեց։ Էկավ Թաքավորին ասեց.

— Թաքավորն ապրած կենա, քեզ հիմա զատ չի պակաս. համա պալատդ լավ չի շինած։ Լավ կըլներ, որ մարմարից շիներիր ու պալատիդ առաջը բաղ ու բաղչա ըլնի։

Թաքավորն ասեց.— Ո՞վ կաբա իմ պալատի առաջը բաղ ու բաղչա քցի, որ ես ման գամ, արևը, լիսը վրիս չընկնի իսկի։

Պառավը ասեց.— Մուրադը կարա, որ քու ձիապանն ա։

Թաքավորը Մուրադին կանչեց ու ասեց, որ իրա պալատի առաջը պտի բաղ ու բաղչա քցի, ոնց որ ըլնի. որ չկարենա, նրա գլուխը կտրել կտա։ Մուրադը տրտում-տխուր գնաց ու իրա կրնկանը էս բանը ասեց։ Նա էլ սրան ումուդով արեց, ասելով. «Բաղ ու բաղչա քցելը ինձ վրա ըլնի»։ Մեկել օրը աղջիկը իրա մատանիքը օլորեց, էրկու մարդ էկան նրա առաջ կանգնեցին ու ասեցին. «Քանդենք, թե շինենք»։ Աղջիկը ասեց. «Շինե՛ք», ու մի սհաթումը նրանք Թաքավորի պալատի առաջը բաղ ու բաղչա քցեցին։

Պառավը սրանով էլ հերիք չկացավ ու Թաքավորին ասեց.

— Լավ կըլներ, որ քու պալատը մարմարի քարից ըլներ շիշինած։

Թաքավորն ասեց.— Ո՞վ կարա ինձ համար էսքան մարմար բերի, որ հերիք գա իմ պալատը շինելու համար։

Պառավը ասեց.— Մենակ քու ձիապան Մուրադը կարա բերի էնքան մարմար։

Թաքավորը էլի Մուրադին կանչեց ու ասեց, որ իրա համար էնքան մարմար պտի բերի, որ իրա պալատը շինելու համար հերիք գա։ Նա գնաց ու գոմումը նստեց մի պառավ ձիու առաջ ու լաց էլավ։ Էն ձին հարցրեց, թե ինչո՞ւ ա լաց ըլնում։

Նա ասեց.— Թաքավորն ասել ա, որ իրա համար էնքան մարմար բերեմ, որ հերիք դա պալատի համար։

Ձին ասեց.— Իսկի դու դարդ մի անի. ես ուստա Մուրադի ձին եմ ու ամեն համփա գիտեմ։ Էդուց մենք կէթանք մի տեղ, որտեղ մարմար շատ կա։ Դու մի կտոր մարմար կվերցնես ու ինձ կքշես։ Համա ետ թասաշ չաննես, վալն էկել ա քեզ տարել, ես էլ դու էլ քար կրիննք։ Քար, քոլ, սար, ձոր ետևիցդ ձեն կտան. «տարա՜ն, տարա՜ն» դու չլսես։

Առավոտը որ լիսը բացվեց թե չէ, Մուրադը էս պառավ ձին նստեց ու քշեց դպա էն տեղը։ Մուրադը մի մարմարի կտոր վեր կալավ ու փախավ։ Ետևից էնքան ձեն ավին. «տարա՜ն», համա Մուրադը իսկի չլսեց ու էկավ Թաքավորի մոտ։ Մեկ էլ ինչ տեսնեն՝ ղրոռ, ղրռ էկան ու լցվեցին մարմարի քարերը Թաքավորի պալատը։

Պառավը սրանով էլ հերիք չէլավ. Թաքավորին ասեց.

— Լավ կրլներ, որ քու պալատը ծածկելու համար ֆլան մեշումը չամի ծառեր կան, բերել տաս։ Էն ծառերը շատ ղայիմ են ու հաստ։

Թաքավորը հարցրեց.— Ով կարա ինձ հըմար էնքան հեռու մեշից չամի դերաններ բերի։

Պառավը էլի Մուրադին շանց տվեց։ Թաքավորը Մուրադին էլի կանչեց ու ասեց.

— Ոնց որ ըլնի, պտի էթաս ինձ հըմար ֆլան մեշիցը չամի դերաններ բերես։

Մուրադը էլի տրտում-տխուր դնաց իրա պառավ ձիու մոտ նստեց ու լաց էլավ ու ձիուն պատմեց Թաքավորի ուզածը։

Ձին ասեց.— Դու դարդ մի անի։ Էդուց ինձ վրա կնստես, ես քեզ կտանեմ էն մեշեն։ Մի ծառի ճուղք կկտրես ու կփախչես, համա էլի ետ չմտիկ անես։ Ետևիցդ ձեն կտան՝ «տարա՜ն», դու ականջ չդնես։

Առավոտը, հենց որ լիսը բացվեց, Մուրադը նստեց ձին ու քշեց դպա էն մեշեն։ Մի ճուղք կտրեց ու փախավ։ Ետևիցը ձեն տվին՝ «տարա՜ն», համա նա իսկի մտիկ չարավ՝ ու քշեց հասավ Թաքավորի մոտ։ Մեկ էլ տեսնես՝ ինչքան ծառ կար մեշում, քոքը-հան էլան ու էկան թափվեցին Թաքավորի պալատը։

Պառավը սրանով էլ հերիք չկացավ ու Թաքավորին ասեց.

20—2573

— Թաքավորն ապրած կենա, էս ա ամեն բան հազիր ա, մնում ա, որ շինող բերել տաս։ Էս պալատը ոչ ով չի կարա շինի, բացի Ուստա Մուրադից, համա նա էս օխտը տարի ա՝ մեռել ա։ Նա շատ լավ բաննահ էր. մենակ նա կարա շինի։ Պառավը էս բանն էլ Մուրադի վրա քցեց։

Թաքավորը էլի կանչեց Մուրադին ու ասեց, որ էթա, ոնց որ ըլնի, Ուստա Մուրադին բերի. թե չէ գլուխը կտրել կտա։ Մուրադը էլի գնաց պառավ ձիու մոտ ու թաքավորի ուզածը ասեց.

Ձին ասեց.— Նա էս օխտը տարի ա՝ մեռած ա. ես գիտեմ նրա տեղը, կէթանք։

Մեկել օրը Մուրադը ձին նստեց ու քշեց դպա Ուստա Մուրադը։ Նա մի մաղարի մեջ էր թաղված։

Մուրադը մտավ մաղարեն ու ձեն տվեց.— Ուստա Մուրա՛դ, Ուստա Մուրա՛դ, դուս արի՛, բան եմ ասելու։

Մուրադը մաղարի միջից ձեն տվեց.— Էդ ո՞վ ա, ես էս օխտը տարի ա մեռել եմ. ինձ հիմա եք հարցնում։

Հետո ձին իրա կողմից աղաչանք արեց.— Ուստա Մուրա՛դ, էս մինն էլ իմ խաթրու։ Քանի տարի ինձ վրա նստել ես, ամեն տեղ ման ես էկել. էս մի իմ խնդիրքս կատարի ու դուս արի ըդտեղից։ Ուստա Մուրադը որ իրա ձիու ձենը լսեց, էն սհաթին դուս էկավ մաղարից ու Մուրադը մին-մին ասեց թաքավորի ուզածը։

Ուստա Մուրադը ասեց.— Ջաքուջս ու մալես[1] քափչի ըստեղ չի, ֆլան Մարդագելի մոտ, պատին քաջ ա արած։ Մուրա՛դ, դու գնա բեր։ Երբոր կմտնես. նա կգա ու քեզ կբարևի ու կասի. «Նստի, ես էթամ քեզ համար կերակուր բերեմ», համա չլսես. նա էթում ա մեկել օթախը, ատամները սրի քեզ ուտելու համար։ Դու էլ նրան մտիկ չանես, պատի վրեն խուրջին ա քաշ արած, վեր կկալնես ու կբերես։ Համա Մարդագելը էլի հետևիցդ կընկնի ու կհասնի։ Հետդ կտանես իրեք բան՝ սապոն, սանդր ու ջուր։ Առաջին անգամ սապոնը կքցես՝ նրա ոտները սոթ կտա, չի կարա հասնի, թե որ տենաս էլի չի օգնում, սանդրը քցի՝ մի մենձ մեշա կրլնի. համա տենաս որ ծառերը կոտրտելով հետևիցդ գալիս ա, որ հասնի, ջուրը քցի՝ ու էն սհաթը մի մենձ ծով կբացվի առաջը ու նա էլ չի կարա դա, կխեղդվի։

---

1 Հաջորդ բառը ձեռագրում անընթեռնելի է (Ս. Կ.)։

Ոնց որ Ուստա Մուրադը ասեց, Մուրադը էնպես էլ արեց ու դնաց Մարզադելի մոտից շաքուշը ու քափչին փախցրեց ու բերեց տվեց Ուստա Մուրադին ու էկան, որ Թաքավորի պալատը շինեն։ Ուստա Մուրադը իրա համար նստած էր ու շաքշին ասում էր՝ քարը կոտրի, մալին ասում էր՝ ցեխ ածա, ու ինքը բարերը դարսում էր։ Էնքան որ սաղ պալատը շինեց պրծավ մի շաբաթեն վրա։

Քաֆթառ պառավը էլ չկարաց բան դտնի, որ կարենա նրան կորցնի ու մնաց սեէրես Մուրադի աղբրտոնց մոտ։

Սրանից հետո Թաքավորին ասեց.— Թաքավորն ապրած կենա, ինչքան ծառայություն արի քեզ, հերիք ա։ Ես էթում եմ, մեր երկիրը. քեզանից ես զադ չեմ ուզում, ո՛չ մալ, ո՛չ դոլվաթ, ինձ մենակ էն պառավ ձին տուր, հերիք ա։

Թաքավորը շատ զոռեց, որ լավ քյահլան ձիաներ վեր կալնի, համա նա չուզեց։ Վե կալավ իրա կնկանը, նստեցին իրանց ձիաները ու տանն զուս։ Մուրազը իրա պառավ ձին էր նստել, իսկ կնիկը ուրիշ մի ձի։

Դնացին, դնացին, շատն ու քիչը աստոծ դիտա, ռաստ էկավ մի բեզրդյան։ Էս բեզրդյանը շատ սատանա մարդ էր. ում հետ մարջ էր էկել, տարել էր։ Մուրադին ասեց.— Արի տափ կենանք, ով ում դանի՝ նա տարել ա։ Թե որ ես գտնեմ քու մալ ու դոլվաթը, կնիկը, ձին ու ինչ որ ունես ինձ տաս, թե զու տանես՝ ես քեզ կտամ իմ ունեցած-չունեցածը, մալ ու դոլվաթը, իմ կնիկն ու ձիաները։

Մուրադը ասեց.— Լա՛վ, տափ կացիր, ես քեզ կքթնեմ։

Բեզրդյանը մտավ մկան բունը։ Ձին Մուրադին ասեց, որ մկան բնումն ա։

Մուրադը ասեց.— Մկան բնումն ես, դուս արի՛։

Բեզրդյանը դուս էկավ ու մեկ էլ տափ կացավ։ Ձին ասեց, որ հրեն բոլի տակին ա։

Մուրադը ասեց.— Բոլի տակին ես, դուս արի՛։

Բեզրդյանը դուս էկավ։ Մնաց մի անդամ։ Էս անգամ բեզրդյանը պուճուրացավ ու ոչխարի կոտորի տակ մտավ։ Ձին ասեց, որ ոչխարի կոտորի տակին ա։

Մուրադը ասեց.— Ոչխարի կոտորի տակին ես, դուս արի՛։

Բեզրդյանը տարվեց։ Հիմի դորը էկավ Մուրադին։ Ձին նրան գարու հատիկ շինեց ու դրեց ատամի տակը։ Բեզրդյանը գես ընկավ, դեն ընկավ՝ չդտավ։

— Որտե՞ղ ես, դուս արի՛, տարար աղբեր, չկարացի գտնեմ։

Մուրադը ձիու ատամի տակից դուս էկավ։ Մուրադը մեկ էլ թաք կացավ։ Էս անգամ ձին նրան աչքի արտանունքի մազ չինեց ու կպցրեց աչքի կոպին։ Շատ դես ու դեն ընկավ բեզրգյանը՝ չըգտավ։

— Էս անգամ էլ տարար, դուս արի՛,— ասեց բեզրգյանը։

Մնաց մի անգամ, էս էլ որ չգտնի, Մուրագը տարել ա բեզրրգյանին։ Ձին Մուրագին մեխ չինեց, դրեց նալի վրա։ Շատ դես, դեն ընկավ, չգտավ բեզրգյանը։

— Աղբեր, տարար, ինչ որ ունեմ-չունեմ քեզ ըլնի, իմ կնիկը, իմ մալ ու դոլվաթը, իմ ձիաները։

Համա Մուրադը նրա մալ ու դոլվաթը ետ ա տալի ու իրա հմար վեր ա կալնում մի Ոսկե աքլոր։

Սրանից հետո գալիս են, գալի ու մի թաքավորի երկրում վեր գալի։ Էս թաքավորի աղջիկը մարդկերանց իրեք բան էր ասում, ով որ ասեր՝ նրա վրա կպսակվեր, ով որ չէ՝ նրա գլուխը կտրում էր։ Էսպես հազարի գլուխը կտրել էր, ով չէր կարացե նրա ասածը իմանա։ Մուրադը գնաց ասեց, որ «Ես կիմանամ»։ Թաքավորը մենձ դիվան սարքեց, որ պտի լսեին, ինչ որ ասում էր Մուրադը ու տենային՝ դրուսս ա ասում, թե սուտ։ Էս աղջիկը պատին քաշ էր արել իրեք բան՝ ղալխան, թուր, փարչ։

Աղջիկը հարցրեց.— Էս ղալխանը ո՞ւմ կհասնի՝ սրա փետ շինողին, թե նրա վրա մեխեր տվողին։

Ձին նրան ասեց, որ «Ասա փետ շինողին»։

Մուրադը ասեց.— Հալբաթքի փետ շինողին, չունքի նա դհա շատ ա չարչարվե։

Դիվանի նստողները ասեցին.— Էվալլա՛, քթար, էդ ա։

Հետո ասեց աղջիկը.— Էս թուրը ո՞ւմ կհասնի՝ սրա մատան հանողին, թե շինողին։ Ձին ասեց. «Ասա, մատան հանողին»։ Մուրադը ասեց.— Հալբաթ մատան հանողին, որ շատ ա չարչարվե։

— Էվալլա՛, էս էլ քթար,— ասեցին դիվանի մարդիկը։

Մնաց մինը, որ էն էլ քթներ, բանը սրծած էր։

Աղջիկը ասեց.— Էս փարչը ո՞ւմ կհասնի՝ նրան, ով որ հողը բերել ա ու շինել, թե նրան, ով որ էս փարչը առել ա։

Ձին Մուրադին ասեց, որ. «Հող բերողին ու շինողին կհասնի»։

Մուրադը ասեց.— Հալբաթ որ հող բերողին ու շինողին կհասնի, նրանք ղհա ավելի են չարչարվե։

— Էվալլա՛,— ասեցին դիվանի մարդիկը,— իրեքն էլ տարավ։

Աղջիկը ասեց.— Սրանից դենը ես քունը, դու իմը։

Համա ձին ասեց, որ՝ էն աղջկա փորում օձ կա, էն օձը քեզ պտի դիան տա։ Դու ղնա քեղ համար ընկեր ղտի ու բեր՝ ինչ որ ունես-չունես իրար մեջ փայ արեք, երբ որ կգա էդ աղջիկը դու ասա. «Աղբե՛ր, արի հալալ փայ աննենք» ու թուրդ քաշի, որ տաս, կես անես։ Նա կվախենա ու բերանից օձը դուս կքցի։

Մուրադը բանեց էլ անում ա. էթում ա մնի յախից բռնում.

— Աղբե՛ր,— ասում ա,— արի ընկեր ըլնենք, ինչ որ ունեմ իրար մեջ փայ աննենք։

Նա էլ ինչու չէր ուղի, ասեց,— Լա՛վ, աննենք։ Ինչ որ ունեին՝ փայ արին։ Էկավ աղջիկը։

Մուրադը ասեց.— Աղբեր, ես հալալությունն եմ սիրում, արի հալալ փայ աննենք։ Ու թուրը քաշից, որ կես անի, օձը բերանից դուս թռավ։ Մուրադը օձին սպանեց, աղջիկը ու իրա փայը տվից ընկերը։

Հետո իրա կնկա հետ էթում ա իրանց երկիրը, իրա մորը ինչ որ դլխով անց ա կացե, մին-մին ասում ա։ Թաքավորը իրա թախտից վեր ա դալի ու իրա որդուն ա նստացնում։ Իսկ մեկել էրկու աղրրտանց տանից դուս ա անում։